

Ժամանակ ունենալով ճաշելու եւ ընթերցելու, հոս, Բիւրեղ տիկին լռիկմնջիկ նոյն գործքերն աւելի սահմանափակ գաւառի մը մէջ կը կատարէ եւ մայրաքար:

— Դու, որդեակ, լաւ ըսիր թէ հոն ընդարձակ գաւառ մը կայ կառավարելու, եւ ես կը խոստովանիմ թէ Սեթայի ըրածը կարող չե՛մ ընել: Երբ մենք պզտի եւ տարեկից էինք՝ նա արդէն իր հասակաւ, իր համարձակութեամբ, գործունեութեամբ, եռանդուն բնաւորութեամբ մեծին եւ փոքրին վրայ տեսակ մը իշխանութիւն կը վարէր իւր հայրենի տան մէջ. առանց Սեթայի խորհուրդ հարցնելու բան մը չե՛ր կատարուէր տան մէջ, իսկ ես, որ իր փոքր քոյրը կը կարծուէի՝ կը զարմանայի այդ Ամատունեաց Օրիորդին վրայ, որ շատ անգամ առնացի ծպտեալ եղբայրներուն հետ որսի կ'երթար, ժայռերու, ափափայներու վրայ կը ձիավարէր յանդուգն քան զամեն երիտասարդը, եւ որ զարմանալին է՝ այսպիսի որսի արշաւանքի մը մէջ Թեոդորոս իրեն հանդիպելով եւ առանց սեռը իմանալու՝ այդ պատանուոյն հետ սիրով կապուէր էր. ուստի օր մը յանկարծ Ամատունեաց դղեակն երթալով եւ իւր եղբարց հետ տեսութենէ վերջ Սիսակը հարցնելու ելեր էր: Եղբարքը շփոթած էին պատասխանի համար, երբ Սիսակ դարձեալ երեւցեր էր Ռշտունեաց իշխանագունին ծանր եւ լուրջ, եւ ամեն նիւթի վրայ ցոյց տուած էր իր սրամտութիւնը: Թեոդորոս, որ 15—16 տարու տղու մը հետ տեսութիւն ընել կը կարծէր՝ յափշտակուած էր դեռաբոյս հանճարէն, բայց վերջն իմանալով թէ Ամատունեաց Օրիորդն է այդ Սիսակը եւ լաւ գիտնալով իւր հօր՝ Վահրամ Ռշտունուոյն, խստութիւնը հայրենական աւանդութեանց պահպանութեան մասին, գաղտնի խնդրէր էր Սեթայէ, որ այդ համարձակութիւնքը չափաւոր է, եւ քիչ վերջը ծնողաց հաւանութեամբ ամուսնութիւնը կատարուեցաւ: Ուստի մի՛ զարմանար եւ մի բաղդատէր մեր հակառակ բնաւորութիւնները, ինչպէս քու հայրդ, աստուած լուսաւորէ հոգին, խաղաղասէր, հանդարտ, անկարելի էր բաղդատել Թեոդորոսի բուռն եւ խիստ բնաւորութեան հետ:

— Բայց դարձեալ ուսկի՞ց է, որ Ռշտունեաց ընդարձակ գաւառը եթէ գոհ է իւր Տիկնոջ կառավարութենէն, մեր Կոգովտի գաւառը աւելի գոհ ու երջանիկ է իւր տիրուհուոյն կառավարութենէն:

— Այս նաեւ շատ դիւրին է բացատրէի Սեթայ պարտաւոր է իր Թեոդորոսի պատերազմասէր բնաւորութեան եւ պաշտօնին պիտոյքը հոգալ, զօրք եւ դրամ հասցնել, ո՛ր գիտէ, երբեմն արտաքոյ կարգի յարկեր ձգել երկրին վրայ, երբ մենք՝ մանաւանդ հօրդ մահուանէն վերջ՝ կը տեսնես թէ ի՞նչ խնայութեամբ կապրինք... ես կը ճանչեմ Սեթայի բնաւորութիւնը՝ շատ առատածեռն է...